



Եվրոպայի խորհրդի պայմանագրեր - Թիվ 118

**Մարդու իրավունքների և հիմնարար
ազատությունների պաշտպանության կոնվենցիայի
Թիվ 5 արձանագրություն**

Ոչ պաշտոնական թարգմանություն

Վիենա, 19.III.1985թ.

1950թ. նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) սույն Արձանագրությունն ստորագրող Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները,

Հաշվի առնելով, որ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի ընթացակարգը բարելավելու և հատկապես արագացնելու նպատակով Կոնվենցիայի որոշ դրույթների փոփոխությունը ցանկալի է,

Հաշվի առնելով, որ նաև նպատակահարմար է Կոնվենցիայի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ընթացակարգին վերաբերող որոշ դրույթների փոփոխությունը,

Համաձայնեցին հետևյալի շուրջ.

Հոդված 1

Կոնվենցիայի Հոդված 20-ը դառնում է սույն հոդվածի պարբերություն 1-ը և հավելվում է հետևյալ չորս պարբերություններով.

«2 Հանձնաժողովը գործում է լիազույժար նիստերով: Այդուհանդերձ, այն կարող է կազմել Պալատներ՝ յուրաքանչյուրն առնվազն յոթ անդամից բաղկացած: Պալատները կարող են ուսումնասիրել սույն Կոնվենցիայի Հոդված 25-ին համապատասխան ներկայացված այն գանգատները, որոնց վերաբերյալ կարելի է որոշումներ կայացնել հաստատված նախադեպային իրավունքի հիման վրա կամ որոնք Կոնվենցիայի մեկնաբանմանը կամ կիրառմանն առնչվող լուրջ հարցեր չեն արժարժում: Սույն սահմանափակումը և սույն հոդվածի պարբերություն 5-ի դրույթները հաշվի առնելով՝ Պալատներին տրվում է Կոնվենցիայով Հանձնաժողովին տրված իրավասությունները:

Հանձնաժողովի այն անդամը, որը ներկայացնում է այն Բարձր պայմանավորվող կողմը, որի առնչությամբ գանգատ է ներկայացված, իրավասու է մասնակցել այն Պալատի աշխատանքներին, որին ներկայացվել է տվյալ գանգատը:

3 Հանձնաժողովը կարող է կազմել կոմիտեններ՝ յուրաքանչյուրն առնվազն երեք անդամից բաղկացած, որոնք միաձայն որոշմամբ իրավասու են անընդունելի համարել ներկայացված գանգատը Հոդված 25-ի դրույթներին համապատասխան կամ այն հանել քննության ենթակա գործերի ցուցակից, եթե նման որոշում կարող է ընդունվել առանց լրացուցիչ ուսումնասիրության:

4 Պալատը կամ կոմիտեն կարող են ցանկացած պահի ընդդատությունը զիջել լիազույժար Հանձնաժողովին, որը կարող է նաև կարգադրել Պալատին կամ կոմիտեին հանձնված ցանկացած գանգատի ընդդատության փոխանցումն իրեն:

5 Բացառապես լիազույժար նիստերում է Հանձնաժողովն իրավասու.

ա. քննության առնել Հոդված 24-ին համապատասխան ներկայացված գանգատը,

բ. Հոդված 48.ա-ի համաձայն՝ գործը հղել Ղատարանին,

գ. Հոդված 36-ի համաձայն՝ մշակել ընթացակարգ:»

Հոդված 2

3 ԵՆՊ 118 – Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա (Թիվ 8 արձանագրություն), 19.III.1985թ.

Կոնվենցիայի Հոդված 21-ը համալրվում է հետևյալ երրորդ պարբերությամբ:

«3 Թեկնածուները պետք է ունենան բարոյական բարձր նկարագիր և պետք է բավարարեն դատական բարձր պաշտոններում նշանակման համար ներկայացվող պահանջները կամ լինեն պետական կամ միջազգային իրավունքի բնագավառում ճանաչված մասնագետներ:»

Հոդված 3

Կոնվենցիայի Հոդված 23-ը համալրվում է հետևյալ նախադասությամբ:

«Պաշտոնավարության ժամկետի ընթացքում նրանք չպետք է զբաղեցնեն որևէ պաշտոն, որն անհամատեղելի է նրանց՝ որպես Հանձնաժողովի անդամների անկախության և անաչառության կամ աշխատանքի բնույթից բխող պահանջների հետ:»

Հոդված 4

Կոնվենցիայի Հոդված 28-ի տեքստը՝ համապատասխան փոփոխություններով, դառնում է այդ հոդվածի պարբերություն 1-ը, իսկ Հոդված 30-ի տեքստը՝ համապատասխան փոփոխություններով, դառնում է պարբերություն 2-ը: Հոդված 28-ի տեքստը փոփոխվում է հետևյալ կերպ.

«Հոդված 28

1 Եթե Հանձնաժողովն իրեն հղված գանգատը հայտարարում է ընդունելի.

ա. այն, փաստերի հաստատման նկատառումով, նախաձեռնում է գործի քննությունը կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ և, անհրաժեշտության դեպքում, իրականացնում է հետաքննություն, որի արդյունավետ իրականացման համար գործին առնչվող պետությունները Հանձնաժողովի հետ դիրքորոշումները փոխանակելուց հետո ապահովում են անհրաժեշտ բոլոր պայմանները,

բ. այն միևնույն ժամանակ իր ծառայությունն է տրամադրում գործին առնչվող կողմերին՝ սույն Կոնվենցիայով սահմանված մարդու իրավունքների հանդեպ հարգանքի հիման վրա խնդրի բարեկամական կարգավորումն ապահովելու նպատակով:

2 Եթե հանձնաժողովին հաջողվում է խնդրի բարեկամական կարգավորում ապահովել, այն կազմում է զեկույց, որն ուղարկվում է գործին առնչվող պետություններին, Նախարարների կոմիտեին և Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հրապարակման նպատակով: Տվյալ զեկույցը սահմանափակվում է փաստերի և ձեռք բերված լուծման հակիրճ շարադրանքով:»

Հոդված 5

Կոնվենցիայի Հոդված 29-ի առաջին պարբերությունում «միաձայն» բառը փոխարինվում է «անդամների երկու երրորդ մեծամասնություն» արտահայտությամբ:

Հոդված 6

Կոնվենցիայում ավելացվում է հետևյալ դրույթը.

«Հոդված 30

1 Հանձնաժողովը քննության ցանկացած փուլում կարող է որոշել գանգատը հանել գործերի ցուցակից, եթե հանգամանքները հանգեցնում են այն եզրակացության, որ՝

4 ԵՆՊ 118 – Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա (Թիվ 8 արձանագրություն), 19.III.1985թ.

- ա. դիմողը մտադիր չէ հետամուտ լինել իր գանգատին, կամ
- բ. վեճն արդեն կարգավորվել է, կամ
- գ. Հանձնաժողովի կողմից սահմանված ցանկացած այլ պատճառաբանությամբ գանգատի քննությունը շարունակելը արդարացված չէ:

Այնուամենայնիվ, Հանձնաժողովը շարունակում է այդ գանգատի քննությունը, եթե այդպես է պահանջում սույն Կոնվենցիայով սահմանված մարդու իրավունքների հանդեպ հարգանքը:

- 2 Եթե Հանձնաժողովը որոշում է գանգատը հանել գործերի ցուցակից այն ընդունելի հայտարարելուց հետո, այն կազմում է զեկույց, որը ներառում է փաստերի շարադրանքը և գանգատը քննությունից հանելու որոշումը՝ համապատասխան պատճառաբանություններով: Ձեկույցն ուղարկվում է կողմերին, ինչպես նաև Նախարարների կոմիտեին՝ ի գիտություն: Հանձնաժողովը կարող է այն հրապարակել:
- 3 Հանձնաժողովը կարող է որոշել գանգատը վերստին ընդգրկել գործերի ցուցակում, եթե գտնում է, որ հանգամանքներն արդարացնում են նման ընթացքը:»

Հոդված 7

Կոնվենցիայի Հոդված 31-ի պարբերություն 1-ը ավելացվում է հետևյալ կերպ.

«1 Եթե գանգատի քննությունը չի ավարտվում Հոդված 28-ի (պարբերություն 2), 29-ի կամ 30-ի դրույթների համապատասխան, Հանձնաժողովը կազմում է զեկույց գանգատի փաստերի վերաբերյալ և իր կարծիքն է արտահայտում առ այն, թե արդյոք հաստատված փաստերը բացահայտել են գործին առնչվող պետության կողմից Կոնվենցիայի ներքո ստանձնած պարտավորությունների խախտում: Այս առնչությամբ Հանձնաժողովի անդամների անհատական կարծիքները կարող են նշվել զեկույցում:»

Հոդված 8

Կոնվենցիայի Հոդված 34-ը փոփոխվում է հետևյալ կերպ.

«Հոդվածներ 20-ի (պարբերություն 3) և 29-ի դրույթների բավարարման դեպքում՝ Հանձնաժողովը որոշում է կայացնում ներկա և քվեարկությանը մասնակցող անդամների մեծամասնությամբ:»

Հոդված 9

Կոնվենցիայի Հոդված 40-ը համալրվում է հետևյալ յոթերորդ պարբերությամբ.

«7 Ղատարանի անդամները Ղատարանի նիստերին մասնակցում են անձամբ: Պաշտոնավարության ընթացքում նրանք չեն զբաղեցնում որևէ այլ պաշտոն, որն անհամատեղելի է նրանց՝ որպես Ղատարանի անդամներ, անկախության և անաչառության կամ այս պաշտոնի պահանջների հետ:»

Հոդված 10

Կոնվենցիայի Հոդված 41-ը փոփոխվում է հետևյալ կերպ.

«Ղատարանն ընտրում է իր նախագահին և մեկ կամ երկու փոխնախագահների՝ երեք տարի ժամկետով: Նրանք կարող են վերընտրվել:»

Հոդված 11

Կոնվենցիայի Հոդված 43-ի առաջին նախադասության մեջ «յոթ» բառը փոխարինվում է «ինը» բառով:

Հոդված 12

- 1 Սույն Արձանագրությունը բաց է Կոնվենցիան ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համար, որոնք դրանով պարտավորված լինելու մասին իրենց համաձայնությունը կարող են արտահայտել այն.
 - ա. ստորագրելով՝ առանց վավերացմանը, ընդունմանը կամ հաստատմանը վերաբերող վերապահման, կամ
 - բ. ստորագրելով՝ վավերացմանը, ընդունմանը կամ հաստատմանը վերաբերող վերապահումով, հետագայում վավերացնելով, ընդունելով կամ հաստատելով:
- 2 Վավերացման, ընդունման կամ հաստատման փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

Հոդված 13

Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որը հաջորդում է Կոնվենցիայի բոլոր անդամների Հոդված 12-ի դրույթների համաձայն սույն Արձանագրությանը պարտավորված լինելու մասին իրենց համաձայնությունն արտահայտելուց հետո եռամսյա ժամկետի լրանալուն:

Հոդված 14

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ծանուցում է.

- ա. յուրաքանչյուր ստորագրման մասին,
- բ. վավերացման, ընդունման կամ հաստատման յուրաքանչյուր փաստաթղթի ի պահ հանձնելու մասին,
- գ. Հոդվածի 13-ի համաձայն սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու մասին,
- դ. սույն Արձանագրությանը վերաբերող յուրաքանչյուր այլ գործողության, ծանուցման կամ հաղորդակցության մասին:

Ի հաստատումն վերը նշվածի՝ ներքոստորագրյալները, համապատասխան իրավասություններով օժտված, ստորագրել են սույն Արձանագրությունը:

Կատարված է Վիենայում, 1985 թվականի մարտի 19-ին, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են, մեկ բնօրինակով, պահպանվում են Եվրոպայի խորհրդի արխիվներում: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետությանը: